

# ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՀՈՐԻԶՈՆ

ՅԱԲԵԼՈՒԿԾ «ՀՈՐԻԶՈՆ» ՀԱՔԱԹԱԹԵՐՈՒԻ ՓԵՏՐՈՒԱՐ 2017

ՓԵՏՐՈՒԱՐ 2017

## Մեր խօսքը

Միրելի՛ փոքրիկներ, Փետրուար ամիսը ունի բազմաթիւ առիթներ. եկեղեցական եւ ազգային: Այս առիթները կը յիշատակուին դպրոցէն ներս կամ եկեղեցոյ մէջ: Մենք, որպէս հայ աշակերտներ, պէտք է մեր մասնակցութիւնը բերենք այս առիթներուն, անվարան յաճախենք եկեղեցի Տիառնընդառաջի օրը, տօները Բուն Բարեկենդանը, յիշատակենք Փետրուարեան ապստամբութիւնը, Վարդանանց պատերազմը եւ Արցախի ազատագրական պայքարը... Մեր պատմութիւնը լի է հպարտալի էջերով, պէտք է տեղեակ ըլլանք անոնցմէ, ինչպէս նաեւ մեր եկեղեցոյ տօներէն, որոնք անբաժան են մեր ազգային պատմութենէն: Մեր այս ամսուան թիւին մէջ պիտի անդրադառնանք այս բոլոր առիթներուն, ինչպէս նաեւ ունինք Արա Գեղեցիկի պատմութիւնը, գիտական բաժիններ, հաճելի խաղեր, հեքիաթ, սուտուքու եւ մանաւանդ բազմազէտի բաժին: Շուտով լուծեցէ՛ք բազմազէտի հարցումները եւ յանձնեցէ՛ք ձեր ուսուցիչներուն, որպէսզի ուղարկեն մեզի: Մենք յաջորդ թիւին մէջ կը տպենք մասնակիցներուն եւ ճիշդ պատասխանողներուն անունները եւ կ'ընտրենք բախտաւոր մասնակիցը, որ «Հորիզոն» Մանկապատանեկանի կողմէ կը ստանայ նուէր մը:

## ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶ

Տեառնընդառաջը Յիսուսը տաճար ընծայաբերելու տօնն է: Ըստ Աւետարանին Յովսէփն ու Մարիամը Յիսուսի Ծնունդէն 40 օր ետք Զայն կը տանին Երուսաղէմի տաճարը՝ Տիրոջ ներկայացնելու:

Տեառնընդառաջը հայ առաքելական եկեղեցոյ անշարժ տօներէն մէկն է, որ կը նշուի Փետրուար 14-ին: Փետրուար 13-ի երեկոյեան եկեղեցական ժամերգութենէն ետք տեղի կ'ունենայ նախատօնակ. քահանան կը վառէ Ս. Սեղանին վրայ դրուած մոմերը, հաւատացեալները վառելով իրենց մոմերը, կը տանին տուն:

Եկեղեցական արարողութենէն ետք, հին սովորութեան համաձայն, եկեղեցոյ բակին մէջ կրակ կը վառեն, որ հեթանոսական շրջանի մեր հին հաւատալիքներուն մնացորդացը կը համարուի:



## ԱԻԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Պարսկաստանի Յազկերտ թագաւորը կ'ուզէր քրիստոնէայ հայերը կրակապաշտ դարձնել:

Հայերը ապստամբեցան եւ կռուի ելան Յազկերտի բանակին դէմ: Հայոց բանակին սպարապետ եղաւ Վարդան Մամիկոնեան, որ քաջ ու ազգասէր էր: Ճակատամարտը տեղի ունեցաւ Աւարայրի դաշտի Տղմուտ գետին եզերքը: Հայերը քաջաբար կռուեցան: Բազմաթիւ հայ զինուորներ նահատակուեցան: Նահատակուեցաւ նաեւ Վարդան Մամիկոնեան:

Այս պատերազմին թէւ զոհեր շատ ունեցանք, սակայն պարսիկները չհասան իրենց նպատակին, որովհետեւ մենք ո՛չ մեր կրօնքը փոխեցինք, ո՛չ ալ մեր հայրենիքը թշնամիին յանձնեցինք:

Աւարայրի հայ նահատակներուն նուիրուած է Վարդանանց Տօնը:



### ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ

1920-ին, Հայաստանի խորհրդայնացումէն ետք (Սովետական Ռուսիոյ տիրապետութեան տակ իյնալ) հայ ժողովուրդը կը յուսար քիչ մը շունչ քաշել, սակայն ռուս կառավարութեան կողմէ տեղի կ'ունենան անհաշիւ ձերբակալութիւններ, բանտարկութիւններ, աքսորներ, նոյնիսկ Երեւանի բանտին մէջ կացինահար կը սպաննուին հայ մտաւորականներն ու քաղաքական ղեկավարները: Իրավիճակը կը դառնայ անտանելի: 1921 Փետրուար 16-18-ին Ալազեազի սասունցի զինեալ ուժերու ազդանշանին վրայ կը պոռթկայ Հայաստանի ամբողջ հայ ժողովուրդը: Երկիրը վերստին կը դառնայ անկախ եւ կը կազմուի Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն, նախագահութեամբ Սիմոն Վրացեանի:

Ապրիլի սկիզբը ռուսական 11-րդ բանակը կը վերագրաւ Հայաստանը: Լեռնահայաստանի (Միւնիք) մէջ դիմադրութիւնը Գարեգին Նժդեհի ղեկավարութեամբ կը շարունակուի քանի մը ամիս եւս:

Փետրուարեան ապստամբութեան շնորհիւ ստոյգ մահէ կը փրկուին մեծ թիւով մտաւորականներ եւ քաղաքական ղեկավարներ. ինչպէս՝ Համօ Օհանջանեան, Յովհաննէս Քաջազնունի, Նիկոլ Աղբալեան եւ ուրիշներ:

### Արցախեան Շարժում

1988 Փետրուար 13-էն սկսեալ Ստեփանակերտի հրապարակին մէջ ամէն օր 40-50 հազար մարդ կը հաւաքուէր: Ժողովուրդը կը պահանջէր Արցախը միացնել Հայաստանին:

Ատրպէյճանը լաւ զինուած բանակով սկսաւ յարձակիլ հայ-ատրպէյճանական սահմանին: Հայերը միացեալ ուժերով ստեղծեցին հայոց ազգային բանակ, որ կը կազմէր մօտ 20-25 հազար, Ատրպէյճանի բանակը՝ 75-80 հազար: Սակայն հայերը կրցան ետ մղել հակառակորդին գրոհը եւ ազատագրել Արցախը: Հակառակորդը չկարենալով դիմադրել եւ վախնալով աւելի ծանր կորուստներ կրելու միտքէն զինադադար կը խնդրէ, որ կը կնքուի 1994 Մայիս 12-ին: Հայերը կ'ունենան 5 հազար գոհ (ինչպէս նաեւ գոհ գացին հազարաւոր հայ խաղաղ բնակիչներ), իսկ Ատրպէյճանցիները՝ 40 հազար գոհ: Արցախեան շարժման հայ ազգը ցոյց տուաւ իր միասնականութեան ուժը, կրցաւ կասեցնել հակառակորդը եւ ազատագրել հայկական տարածքներու մէկ մասը:



### ՄԵՂՈՒՆ ՈՒ ՀԱԻԸ

Հաւը Մեղուին վրայ ծիծաղելով կ'ըսէ.

- Ի՞նչ անշնորհք ճանճ ես դուն, ամբողջ օրը ծաղիկէ ծաղիկ կը թռչկոտիս եւ օգուտ մը չունիս:
- Իսկ դո՞ւն, հաւի՛ կ, ի՞նչ կը շինես,- հարցուց մեղուն:
- Միթէ չէ՞ ս գիտեր, թէ ի՞նչ կը շինեմ, ես քեզի պէս պարապ-սարապ չեմ տղտղար: Ես օրը մէկ հաւկիթ կ'ածեմ, գիտե՛ ս մէկ հաւկիթը քանի է:
- Գիտեմ, գիտեմ, հասկցայ: Բայց ես կը կարծեի դուն օրը հարիւր հաւկիթ կ'ածես:
- Ինչպէ՛ ս կարելի է օրը հարիւր հաւկիթ ածել, անխէ՛ լք մեղու:
- Հապա եթէ քու ւածածդ ընդամենը մէկ հաւկիթ է, ուրե՛մս ինչո՞ւ հարիւր անգամ կը կչկչաս, լսեցէ՛ ք, հաւկիթ ածեր եմ: Իմ կարծիքովս՝ այսքան կչկչալուդ մէկ հաւկիթը շատ քիչ է: Այնպէս չէ՛, իմաստ ուն հաւիկ:
- Բայց դո՞ւն ի՞նչ կը շինես, դո՞ւն, որ իմ մէկ հաւկիթս քիչ կը համարես:
- Ես ինչ որ կը շինեմ, քեզի պէս կչկչալով չեմ յայտներ ուրիշներուն: Ես մեղր կը շինեմ: Գիտե՛ ս ինչ է մեղրը: Այդ հաւու կերակուր չէ, քու խելքդ չի հասնիր, հաւի՛ կ:



### ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ

Արամ Նահապետի որդին՝ Արա, քաջ եւ հայրենասէր նահապետ մըն էր: Ան շատ գեղեցիկ էր: Արա ամուսնացած էր Նուարդ իշխանուհիին հետ: Ասորեստանի Շամիրամ թագուհին կը լսէ Արայի գեղեցկութեան մասին եւ կ'ուզէ ամուսնանալ անոր հետ, սակայն Արա կը մերժէ եւ կ'ըսէ. «Հայոց թագուհին միշտ հայ պէտք է ըլլայ: Ես ո՛չ օտար կին կ'ուզեմ, ո՛չ ալ օտար երկրի հարստութիւն»:

Շամիրամ կը զայրանայ ու կը յարձակի Հայաստանի վրայ: Ան իր զինուորներուն կը պատուիրէ, որ ողջ բռնեն Արան, սակայն զինուորները կը սպաննեն Արա Գեղեցիկը:

Պատերազմէն ետք Շամիրամ կը հրամայէ, որ Արայի մարմինը դնեն պալատին տանիքը, որպէսզի յարալեզները ողջնցնեն զայն: Արա չ'ողջնար:



Արա Գեղեցիկ եւ Շամիրամ, «Հայոց պատմութիւնը իտալացի գծագրիչներու նկարչութեամբ»

### ԿԵՆՂԱՆԻՆԵՐԸ ՉՄՐԱՆ




Կենդանիներուն համար ձմեռը ծանր շրջան է. ե՛ւ ցուրտ, ե՛ւ ուտելիքի պակաս:

Մնունդ հայթայթելը խիստ դժուար է ոչ միայն բուսակերներուն, ալ նաեւ մսակերներուն համար: Աւելի ծանր է միջատակերներուն վիճակը, որովհետեւ միջատները ձմրան կ'անհետանան:

Շատ թռչուններ կը գաղթեն տաք երկիրներ, սառնարիւն կենդանիներու մեծամասնութիւնը ձմեռնաքունի կը մտնեն: Այս կենդանիները ամրան լաւ սնունդ կ'առնեն, կը կուտակեն ճարպի մեծ պաշար, որուն շնորհիւ առանց սնունդի կը դիմանան մի քանի ամիս:

Որոշ կենդանիներ կը քնանան սովորականէն աւելի: Գորշուկները շաբաթներով դուրս չեն ելլեր, իսկ արջերը ամբողջ ցուրտ շրջանը կ'անցընեն իրենց որջերէն ներս:



**Ո՞Վ Կ'ՈՒԶԷ ԸԼԼԱԼ ԲԱԶՄԱԳԷՏ**

**1-Տեառնընդառաջի եկեղեցական արարողութենէն ետք հին սովորութեան համաձայն.**

- Ա-Եկեղեցոյ բակին մէջ կրակ կը վառեն
- Բ-Ձիթենիի ճիւղ կը տանին տուն
- Գ-Ծով կը պահեն
- Դ-Տնօրհնէք կ'ընեն

**2-Ո՞ւր տեղի ունեցաւ Աւարայրի ճակատամարտը:**

- Ա-Արաքս գետի ափին
- Բ-Արարատ լեռան գագաթը
- Գ-Արարատեան դաշտին մէջ
- Դ-Տղմուտ գետին եզերքը



**3-Ո՞ր թուականին տեղի ունեցաւ Հայաստանի խորհրդայնացումը:**

- Ա-1920-ին
- Բ-1930-ին
- Գ-1990-ին
- Դ-2015-ին

**5-Ե՞րբ տեղի ունեցաւ Արցախի եւ Ատրպէյճանի միջեւ զինադադարը:**

- Ա-1994 Մայիս 28-ին
- Բ-1994 Մայիս 12-ին
- Գ-1994 Ապրիլ 24-ին
- Դ-1994 Օգոստոս 3-ին

**4-Ո՞վ էր Աւարայրի ճակատամարտի սպարապետը:**

- Ա-Վարդան Մամիկոնեան
- Բ-Վահան Մամիկոնեան
- Գ-Յազկերտ թագաւոր
- Դ-Քաջ զինուոր մը

**6-Ի՞նչու Յովսէփ եւ Մարիամ Յիսուսի ծնունդէն 40 օր ետք գայն տարին Երուսաղէմի տաճարը:**

- Ա-Տեառնընդառաջ տօնելու:
- Բ-Աստուծոյ ներկայացնելու:
- Գ-Մով վառելով աղօթելու:
- Դ-Որովհետեւ Տեառնընդառաջը հայ առաքելական եկեղեցոյ անշարժ տօներէն մէկն է:

**8-Ինչո՞ւ Արայի դիակը կը դնեն պալատին տանիքը:**

- Ա-Որովհետեւ Արա կը մերժէ Շամիրամի հետ ամուսնանալ:
- Բ-Որովհետեւ Արա ամուսնացած էր Նուարդ իշխանուհիին հետ:
- Գ-Որպէսզի յարալեզները ողջնցնեն գայն:
- Դ-Որովհետեւ ան հայրենասէր նահապետ մըն էր:



**9-Գտի՛ր բանջարեղէններու շարքը:**

- Ա-Ճակնդեղ – բողկ – սալոր
- Բ-Սոխ – կեռաս – դդում
- Գ-Նարինջ – խնձոր – խաղող
- Դ-Կաղամբ – շոմին – բողկ

**7-Ինչո՞ւ ձմրան միջատակերներուն վիճակը աւելի ծանր է:**

- Ա-Որովհետեւ միջատները ձմրան կը գաղթեն:
- Բ-Որովհետեւ միջատները ձմեռնաքունի կը մտնեն:
- Գ-Որովհետեւ միջատները ձմրան կ'անհետանան:
- Դ-Որովհետեւ միջատները սառնարիւն կենդանիներ են:

**10-Որո՞ւ որդին էր Արա Գեղեցիկ:**

- Ա-Հայկ Նահապետի
- Բ-Վարդան Մամիկոնեանի
- Գ-Գարեգին Նջդեհի
- Դ-Արամ Նահապետի



**ԻՆՉԷ՛Ն Ի՛ՆՉ ԿԸ ՍՏԱՆԱԼՔ**

Միացո՛ւր

- Ալիւր
- Կաթ
- Ծառ
- Ճակնդեղ
- Ծիրան
- Ձիթապտուղ

- ձէթ
- շաքար
- անուշ
- պանիր
- հաց
- պտուղ

**ՍՈՒՏՈՒՔՈՒ**

գ							բ
ա	բ	ը	է	զ	զ		է
		դ	ը			ա	բ
զ		է	բ	բ	զ		ա
թ							բ
	ա		դ	է	ը		թ
դ	է	ա					
	թ		զ	դ	է	զ	բ
ը					բ		դ



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Երջանային Վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Խմբագրութիւն՝ Սոնա Թիթիզեանի Թիւր պատրաստեց Սարի Էլիճեան Քելլէան Զեւայղացք Նորայր Նիկողոսեանի

Հեռաձայն (514) 332-3757  
Հեռապատճէն (514) 332-4870  
Email: sylva@horizonweekly.ca